

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՀՌՈՄ

Մայր Աթոռի և Վատիկանի միջև կատարված փոխադարձ թղթակցությունների հիման վրա **Վեհափառ Հայրապետը** պաշտոնական այցելություն տվեց **Հռոմ՝ Սրբազան Քահանայապետին,** սույն թվի մայիսի 8—12-ը:

Այս առթիվ **Հայոց Հայրապետը** փետրվարի 9-ին մասնավոր առաքելությամբ **Վատիկան** ուղարկեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանին** և ԱՄՆ-ի Ազգային եկեղեցիների խորհրդի մոտ հայ եկեղեցու ներկայացուցիչ **տ. Մամբրե քահանա Գուզույանին՝** Վատիկանի ներկայացուցիչների հետ կազմելու համար Իր առաջիկա այցելության ծրագրի նախագիծը:

Մարտի սկզբներին **Սերովբե սրբազանը** եղավ **Վատիկանում:** Իր առաքելությունը կատարելուց հետո ժամանեց Մայր Աթոռ և **Հայոց Հայրապետին** ներկայացրեց ծրագրի նախագիծը ի վավերացումն:

Ամեն ինչ պատրաստ էր, և **Վեհափառ Հայրապետը** սույն թվի մայիսի 3-ին մեկնեց ս. Էջմիածնից:

Դեպի **Հռոմ Ամենայն Հայոց կաթողիկոսի** այցելության առթիվ հայրապետական շքախմբի կազմում էին՝

Երուսաղեմի հայոց պատրիարք **տ. Եղիշե արքեպ. Տերտերյանը.**

Կ. Պոլսի հայոց պատրիարք **տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը.**

Մայր տաճարի լուսարարապետ, Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ **տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը.**

Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը.**

Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ **տ. Պսակ արքեպ. Թումայանը.**

Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ **տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը.**

Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ **տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը.**

VISITA DI VASKEN I A PAOLO VI

Ս. Պետրոս տաճարում միատեղ աղոթքի ծրագիր

Իտալիայի հայոց հոգևոր հովիվ **տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը.**

Երուսաղեմի հայոց պատրիարքության դռան **եպս. Շահե Անեմյանը.**

Հայոց Հայրապետի գավազանակիր **տ. Նարեկ վրդ. Շաքարյանը.**

ԱՄՆ-ի Ազգային եկեղեցիների խորհրդի մոտ հայ եկեղեցու ներկայացուցիչ **տ. Մամբրե քհն. Գուզույանը.**

Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար և Վեհափառ Հայրապետի թարգման **Պարգև Շահբազյանը:**

Մայիսի 3-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 17-ին, **Երևանի** օդանավակայանում **Հայոց Հայրապետին** ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, պաշտոնեությունը, Երևանի քահանայից դասը և այլ պաշտոնական անձինք:

Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթեց նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Սուրեն Հովհաննիսյանը:**

Մայիսի 6-ին, չորեքշաբթի օրը, Մոսկվայի Շերեմետևոյի օդանավակայանից դեպի **Միլանո Հայոց Հայրապետին** ճանապարհեցին Ռուսաստանի և

Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդ **տ. Պարգև եպս. Գևորգյանը,** հայ եկեղեցական խորհրդի անդամները և այլ պաշտոնական անձինք:

Հայոց Հայրապետին ճանապարհեցին նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Պ. Մակարցևը** և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը:**

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՄԻԼԱՆՈ

Մայիսի 6-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, **Վեհափառ Հայրապետը** Մայր Աթոռից Իրեն ընկերակցող շքախմբի անդամների հետ ժամանում է **Միլանոյի** միջազգային օդանավակայանը: **Հայոց Հայրապետը** պաշտոնապես դիմավորվում է Միլանոյի հայ համայնքի ազգային-եկեղեցական իշխանության

Հիշատակ սրբուհի Թերեզա Կուդերի կանոնականացման արարողությունից
ս. Պետրոս տաճարում

ներկայացուցիչների և Միլանո ժամանած հայրապետական շքախմբի պաշտոնական և պատվո շքախմբի մի խումբ հոգևորական և աշխարհական անդամների կողմից՝ գլխավորությամբ Իտալիայի հայոց հոգևոր հովիվ **տ. Զգոն**



Հայ. Պոլսեցիներ Գեղեցկափայտ դամբարանների մոտ

եպիսկոպոսի: Հայոց Հայրապետը հրաշափառով մուտք է գործում **Միլանոյի** հայոց ս. Քառասուն մանկանց եկեղեցին, ուր օրհնում է բոլոր ներկաներին: **Հայոց Հայրապետը** առաջնորդվում է **Միլանոյի** «Էքսելսյոր Գալլիա» հյուրանոցը, որտեղ մի փոքր հանգստանալուց հետո ընդունում է մի շարք այցելություններ, այդ թվում **Վահրամ Դավիթխանյանի՝ Թեհրանից, Անդրանիկ Ծառուկյանի՝ Բեյրութից, Վահրամ Մավյանի՝ Լիսաբոնից,** և հունահայ թեմական խորհրդի անդամների:

Մայիսի 7-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետի հյուրանոցի հալլկաբաժնում տեղի ունեցավ հանդիպում և ապա խորհրդակցություն Միլանո ժամանած երկու սրբազան պատրիարքների և շքախմբի մյուս բարձրաստիճան հոգևորականների հետ 1969 թ. եպիսկոպոսական ժողովի օրակարգի առկախ մնացած մի շարք հարցերի շուրջ:

Նույն օրը **Վեհափառ Հայրապետը** ընդունեց նաև բազում պաշտոնական այցելություններ:

Հռոմ. Հռոմեական անտիկ շրջանի կոթող՝ Հայաստանի դեմ հռոմեացիների մղած պատերազմների առթիվ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՀՌՈՄ

Մայիսի 8-ին, ուրբաթ օրը, հետմիջօրեի ժամը 16-ին, **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը** ժամանում է **Հռոմի** «Լեոնարդո դա Վինչի» միջազգային օդանավակայանը՝ ընկերակցությամբ երկու սրբազան պատրիարքների և շքախմբի անդամ արքեպիսկոպոսների և պատվո հյուրերի:



ՍԻԳԻՍՏԻՆՅԱՆ ՄԱՏՈՒՌ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՐԴՈՒՄ Է ԻՐ ԽՈՍՔԸ

PETRUS CANISIUS VAN LIERDE
ORDINIS
DEI ET APOSTOLICAE
EPISCOPUS
SACRARII APOSTOLICI
SANCTISSIMI D.N. PAPAE PRAELATUS
SANCTI NUNCIUSMI
SEDIS GRATIA
PORPHYRIENSIS
PRAEFECTUS
SERENISSIMI PONTIFICIS SOLIO ASSISTENS
CUSTODIAMUS VERITATEM
AC VICARIUS GENERALIS IN CIVITATE VATICANA

Hae litteras perlegentibus fidem facimus atque laetamur Nos, ad majorem Dei gloriam Sanctorumque Suorum venerationem, recognovisse particulam ex ossibus

S. BARTHOLOMAEI, APOSTOLI

——— ex authenticis locis extractam, quam in exhibita theca ———

bene clausa, crystallo munita, funiculo serico rubri coloris obstricta, et nostro sigillo impresso super cera minio tincta signata, reverenter collocavimus. In horum fidem testimonium hoc manu nostra subscriptum, et signo firmatum ei remisimus.

Datum ex Civitate Vaticana hac die 12 mensis Maii, an. 1970.

+ Petrus Canisius van Lierde
Vic. Gen. Summi Pontificis Pauli VI

Ս. Բարթողիմեոս Առաքյալի մասունքի վկայագիրը

Օդանավակայանում **Հայոց Հայրապետին,** հանուն **Սրբազան Քահանայապետ Պողոս Զ-ի,** դիմավորում են Վատիկանի Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ **կարդինալ Ժ. Մ. Վիլլբրանտոսը,** Վատիկանի Պետական քարտուղարության նախագահի տեղակալ **Բենելլի արքեպիսկոպոսը,** Վատիկանի Հանրային գործերի քարտուղար **Կասարոլի արքեպիսկոպոսը,** Լիբանանի հայ կաթողիկե համայնքի պատրիարք **Իգնատիոս Պետրոս Պաթանյանը** և բազում այլ պաշտոնական անձնավորություններ:

Օդանավակայանի պաշտոնական հյուրերին հատկացված հարկաբաժնում **Հայոց Հայրապետը** հայ և օտար մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության թղթակիցներին անում է մի հակիրճ հայտարարություն՝ **Հռոմ** Իր այցելության կապակցությամբ: Այնուհետև **Հայոց Հայրապետը** պաշտոնական շքերթով, պատվո ոստիկանական ջոկատի առաջնորդությամբ մուտք է գործում Վատիկան, ուր նրան որպես բնակության վայր տրամադրվել էր **ս. Հովհաննեսի** հնադարյան աշտարակը:

Այս պատմական աշտարակի շքամուտքի առաջ **Հայոց Հայրապետին,** հանուն **Սրբազան Պապի,** դիմավորում են **Ժակ Մարտեն արքեպիսկոպոսը** և **մարկիզ Դոն Զուլիո Սակերտին:**

Երուսաղեմի և Կ. Պոլսի սրբազան պատրիարքները նույնպես հյուրընկալվում են սույն աշտարակում, իսկ շքախմբի մյուս բարձրաստիճան հոգևորականները՝ Վատիկանի «Կոլոմբուս» հյուրանոցում:

Բացի Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներից, Հռոմի հանդիսություններին ներկա գտնվեցին ափյուռքահայ եկեղեցական և աշխարհական հանրածանոթ անձնավորություններ՝ **Իտալիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Անգլիայից, ԱՄՆ-ից, Լիբանանից** և **Կիպրոսից:**

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ՊԵՏՐՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 8-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, **Հայոց Հայրապետը** Իր շքախմբի անդամների և **կարդինալ Վիլլբրանտոսի** ուղեկցությամբ, հանդիսավորապես առաջնորդվում է դեպի ս. Պետրոս պատմական Մայր տաճարը:

Մայր տաճարի մեծ դռան շքամուտքի առաջ **Հայոց Հայրապետին** դիմավորում է տաճարի ավագերեց **կարդինալ Մարելլան,** որը, հանուն **Սրբազան Պապի,** բարիգալստյան ուղերձով ողջունում է **Հայոց Հայրապետի** ժամանումը:

Մայր տաճարի հոգևորականաց դասը, զգեստավորված, **Հայոց Հայրապետին** առաջնորդում է դեպի տաճար: Հայ հոգևորականաց խումբը երգում է հրաշափառը: **Հայոց Հայրապետը** և շքախմբի հոգևորական անդամները իրենց ուխտն ու աղոթքն են կատարում տաճարում և ապա այցելում ս. Պետրոս առաքյալի պատմական դամբարանը, այնուհետև տաճարի գեղանահարկը, ուր մանրամասն բացատրություններ են տալիս հնագետ-պատմաբանները:

Երեկոյան ժամը 20-ին Հայոց Հայրապետի բարձր պատվին **Վատիկանի** «Կոլոմբուս» հյուրանոցում պաշտոնական ճաշկերույթ է տալիս Վատիկանի Պետական քարտուղար **կարդինալ Ժան Վիլլոն:**

Ընդունելությանը ներկա են լինում հայ և օտար բազում պաշտոնական անձնավորություններ: Ընդունելության ժամանակ **կարդինալ Վիլլբրանտոսը** ջերմորեն ողջունում է հայ եկեղեցու գերագույն Պետի՝ **Ամենայն Հայոց Հայրապետի** պատմական այցը ի **Հռոմ:**

ՍԻԳԻՍՏԻՆՅԱՆ ՄԱՏՐԱՆ ՄԵՋ ՄԻԱՏԵՂ ԱՂՈԹՔԻ ՊԱՀ

Հրաժեշտի պահ Վատիկանում

Հայոց Հայրապետը արտասանում է պատասխան ողջույնի և օրհնության խոսք:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՎ ՈՂՋԱԳՈՒՐՈՒՄԸ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՀԵՏ

Մայիսի 9-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, **Վատիկանի** «Կորտիլե Սան Դամասո» պալատական շքեղ դահլիճում տեղի է ունենում Հռոմի **Սրբազան Քահանայապետի** և **Ամենայն Հայոց Հայրապետի** հանդիպումը և եղբայրական ողջագուրումը:

Սույն պատմական հանդիպմանն ու ողջագուրմանը ներկա են Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց սրբազան պատրիարքները, շքախմբին մաս կազմող մյուս բարձրաստիճան հոգևորականները և պատվո հյուրերը, ինչպես նաև կարդինալներ, կաթոլիկ եկեղեցու արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ:

Երկու քույր եկեղեցիների հոգևոր պետերը եկեղեցական թափորով առաջնորդվում են դեպի Սիքստինյան հոչակավոր մատուռը և խորանի առաջ բազմում իրենց հայրապետական գահերի վրա:

Աջակողմյան դասում իրենց տեղերն են գրավում սրբազան ծիրանավորներն ու արքեպիսկոպոսները, իսկ ձախակողմյան դասում՝ հայոց երկու սրբազան պատրիարք հայրերը և շքախմբի մյուս անդամները: Մատուռը լիքն է հայ և իտալացի հավատացյալների խուռներամ բազմությամբ:

Այս հանդիսավոր առիթով Վատիկանի կողմից հատկապես պատրաստվել էր երկու Հայրապետների հանդիպմանն ու ողջագուրմանը նվիրված սրբազան արարողությունների լատիներեն և հայերեն լեզուներով մի ուղեցույց-գրքույկ՝ զարդարված հայկական մանրանկարչության գեղատիպ և գունավոր նմուշներով:

Եկեղեցական արարողության ավարտին **Ամենայն Հայոց Հայրապետը,** հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և պատմական կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ողջունում է Հռոմի **Սրբազան Քահանայապետին**՝ Իր ողջույնի խոսքի մեջ շեշտելով քրիստոնեական եկեղեցիների համագործակցությունը էկումենիկ ոգով՝ ի խնդիր նաև աշխարհի խաղաղության պահպանման:

Հայոց Հայրապետի ողջույնի խոսքի ֆրանսերեն թարգմանությունը կարդում է **տ. Շահե եպս. Անեմյանը:**

Հռոմի **Սրբազան Քահանայապետը** իր ողջույնի և բարիգալստյան պատասխան խոսքում վեր է հանում **Հայոց Հայրապետի** պատմական այս այցելության հոգևոր բացառիկ նշանակությունը և շեշտում ի պաշտպանություն քրիստոնեական հավատքի և քաղաքակրթության հայ ժողովրդի և հայ եկեղեցու դարավոր պայքարը: Այնուհետև բեմի վրա տեղի է ունենում երկու հայրապետների ի Քրիստոս սիրո և եղբայրության սրտառուչ ողջագուրումը՝ ներկաների խանդավառ ծափերի տակ:

Սիքստինյան մատռան կամարների ներքո վեհ ու հաղթական հնչում է հայ եկեղեցու հիմնը՝ «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի», մինչ եկեղեցական թափորը երկու Քահանայապետերին առաջնորդում է դեպի Վատիկանի պալատի սրահներից մեկը, որտեղ **Հայոց Հայրապետը Սրբազան Պապին** է ներկայացնում Իր շքախմբի անդամներին: Փոխադարձաբար **Սրբազան Պապն** էլ **Հայոց Հայրապետին** է ներկայացնում կարդինալներին և բարձրաստիճան հոգևորականներին:



Հռոմ. Վեհարան Հայրապետը Լոնդան վարժարանում

Նույն օրը, հետմիջօրեի ժամը 16-ին, հանուն Հայոց Վեհափառ Հայրապետի, **տ. Շնորհք սրբազան պատրիարքը** այցելում է ս. Պողոսի տաճարը, գետնափոր շիրիմը, ապա աբբայարանի հյուրասրահը, ուր աբբայարանի մեծավորը բարիգալստյան ճառով ողջունում է սրբազան պատրիարքին և նրան ընկերակցող անձանց: **Տ. Շնորհք պատրիարքը** Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնություններն է հաղորդում տաճարի աբբահորը և նրա միաբանությանը: Փոխանակվում են հուշանվերներ:

Ավելի ուշ, երեկոյան ժամը 17-ին, **տ. Շնորհք պատրիարքը,** հանուն Վեհափառ Հայրապետի, այցելում է ս. Հովհաննես Լատրան տաճարը, ուր նրան դիմավորում է տաճարի ավագերեց 90-ամյա **կարդինալ Մազելլա Ալոիզան:**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՇԱՐԿԵՐՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Մայիսի 9-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 20-ին, **կարդինալ Վիլլբրանտսը,** ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, պաշտոնական ընդունելություն է կազմակերպում «Կոլոմբուս» հյուրանոցի ճաշասրահում: Ներկա են լինում բազում հրավիրյալներ՝ շուրջ 150 հոգի: **Կարդինալ Վիլլբրանտսը** բարիգալստյան սրտագին մի ճառով ողջունում է **Հայոց Հայրապետի** ներկայությունը: Բոլոր ներկաները ջերմորեն լսում են նաև **Ամենայն Հայոց կաթողիկոսի** սիրո և օրհնության պատասխան խոսքը: Ընդունելության ավարտին **կարդինալ Վիլլբրանտսը Հայոց Հայրապետին** է ներկայացնում բոլոր օտար հյուրերին, իսկ **Հայոց Հայրապետը**՝ Իր շքախմբի անդամներին:

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ Ս. ՊԵՏՐՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 10-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Հռոմի **Սրբազան Քահանայապետը** հանդիսավոր պատարագ է մատուցում ս. Պետրոս Մայր տաճարում:

Ս. պատարագին ներկա են լինում **Հայոց Հայրապետը,** սրբազան պատրիարքները, հայրապետական շքախմբի անդամները, պատվո հյուրեր, հայ և օտար շուրջ 40 հազար ուխտավորներ ու հավատացյալներ: Քահանայապետական հանդիսավոր պատարագին ներկա են նաև Վատիկանի մոտ դիվանագիտական մարմնի ներկայացուցիչներ, ինչպես նաև Ֆրանսիայի ներքին գործերի մինիստր **պրն. Մարսելենը**՝ 2000 ֆրանսիացի ուխտավորներով: Ս. պատարագի ընթացքում այդ օրը պիտի կանոնականացվեր սրբուհի Թերեզա Կուդերը: Ս. Պետրոս Մայր տաճարի աջակողմյան դասում հայրապետական Իր գահի վրա բազմել էր **Հայոց Հայրապետը**՝ շրջապատված սրբազան պատրիարքներով և արքեպիսկոպոսներով: Սուրբ խորանին մոտենալիս **Սրբազան Պապը** ողջունում է **Ամենայն Հայոց Հայրապետին:** «Ողջույնի» ժամանակ **կարդինալ Վիլլբրանտսը,** որն սպասարկում էր ս. սեղանին, մոտենում է **Հայոց Հայրապետին** և Նրան ու հայոց երկու սրբազան պատրիարքներին է փոխանցում սուրբ պատարագի ողջույնը:

Պատարագիչ **Սրբազան Քահանայապետը** պատարագի վերջում իր քարոզի մեջ խոսելուց հետո սրբուհի Թերեզա Կուդերի սրբակենցաղ կյանքի և առաքելական գործունեության մասին, ողջունում է նաև **Ամենայն Հայոց Հայրապետի** ներկայությունը:

Ապա Սրբազան Պապի հրավերով **Հայոց Հայրապետը** կարդինալների

Վենետիկ. Ս. Մարկոսի հրապարակում

ուղեկցությամբ բարձրանում է ս. սեղան, ուր երկու Հայրապետները փոխանակում են քրիստոնեական եղբայրության սուրբ համբույրը: Այդ պահին **Սրբազան Պապը,** ի հիշատակ սուրբ համբույրի և ի նշան եղբայրական սիրո, Իր քահանայապետական թանկարժեք մատանին անցկացնում է **Ամենայն Հայոց Հայրապետի** մատը: Ապա եկեղեցու երկու հոգևոր պետերը, ձեռք-ձեռքի բռնած, իջնում են ս. Սեղանից և հանդիսավոր թափորի գլուխն անցած՝ բաշխում իրենց օրհնություններն ու ողջույնները բազմահազար հավատացյալներին, մինչ տաճարի մեջ թնդում էին արտագին ծափողջույններ:

Ավելի ուշ **Սրբազան Քահանայապետը,** որպես օրվա հուշանվեր, **Ամենայն Հայոց Հայրապետին** է ուղարկում ս. պատարագի գինով լիքը երկու գեղեցիկ տակառիկներ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Մայիսի 10-ին, կիրակի օրը, հետմիջօրեի ժամը 14-ին, Հռոմի Լևոնյան վարժարանի ընդունելությանց դահլիճում **կարդինալ Գրիգոր Պետրոս Աղաջանյանը Ամենայն Հայոց Հայրապետի** և Նրա շքախմբի պատվին ճաշկերույթ է տալիս, որին ներկա են լինում բազում հրավիրյալներ, այդ թվում նաև ազգային ծանոթ դեմքեր, մտավորականներ, թղթակիցներ՝ շուրջ 150 հոգի:

Ընդունելության ժամանակ **կարդինալ Աղաջանյանը** ողջունում է **Ամենայն Հայոց Հայրապետի** օրհնաբեր ներկայությունը կրթական այս հաստատության տակ, որին պատասխանում է **Վեհափառ Հայրապետը** օրհնության և շնորհակալության խոսքով: Վարժարանի սաները կատարում են մի շարք հայկական ժողովրդական խմբերգեր: Ճաշկերույթը սկսվում և ավարտվում է **Հայոց Հայրապետի** օրհնությամբ և աղոթքով: Այնուհետև **Ամենայն Հայոց կաթողիկոսը** հանդիպում է ունենում Լևոնյան վարժարանի ուսանողության հետ՝ տալով Իր պատգամն ու օրհնությունը: Ի հուշ Իր այցելության **Հայոց Հայրապետը** վարժարանի տեսուչ **տ. Ներսես ծ. վրդ. Սեթյանին** է հանձնում ս. Էջմիածնի Մայր տաճարի մեծադիր գունավոր լուսանկարը, իսկ ժառանգավորներին՝ Էջմիածնի կրծքանշաններ: Տեսչի առաջնորդությամբ **Ամենայն Հայոց Հայրապետը,** այցելելուց հետո դպրոցի հարկաբաժինները, գրադարանը, մատուռը, հրաժեշտ է առնում և վերադառնում Իր բնակավայրը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՏԱԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Մայիսի 10-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 20-ին, **Վեհափառ Հայրապետը** Վատիկանի «Կանչելլարիա» պալատի դահլիճում հանդիպում է ունենում իտալահայ համայնքի և այդ օրերին Հռոմ ժամանած ամերիկահայ ավելի քան չորս հարյուր ուխտավորների հետ, որոնք եկել էին ողջունելու **Հայոց Հայրապետին** և ստանալու Նրա օրհնությունները:

Հանուն իտալահայ համայնքի **տ. Զգոն եպիսկոպոսը** և հանուն Եվրոպայի հայության **տ. Սերովբե արքեպիսկոպոսը** բարիգալստյան ուղերձներով ողջունում են **Հայոց Հայրապետի** շնորհաբեր ներկայությունը իր հարազատ ժողովրդի ծոցում: **Վեհափառ Հայրապետը,** խորապես զգացված, Իր օրհնությունն է տալիս բոլորին և Մայր Աթոռ ս. Էջմիածնի ու մայր հայրենիքի լուրերով խանդավառում բոլոր ներկաների հայրենակարոտ սրտերը:

Հանդիսության ավարտին բոլոր ներկաները աջահաբույրով իրենց որդիական սերն ու հարգանքն են մատուցում **Հայոց Հայրապետին:**

Ն. ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԸ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒՄ ԵՆ
ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ Ս. ՊԵՏՐՈՍ ՏԱՃԱՐՈՒՄ



Վենետիկ. Վեհարան տոփարան Հայրապետական Ամենայն Հայոց Գարեգին Բ. Գալուստ Տարոնի Ս. Գրիգորի տաճարում ընդունելության ելքին

ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 11-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, **Սրբազան Պապի** առանձնասենյակում առանձին հանդիպում և տեսակցություն է տեղի ունենում **Ամենայն Հայոց Հայրապետի** և **Սրբազան Քահանայապետի** միջև: Տեսակցությունից առաջ **Հայոց Հայրապետին,** հանուն Հռոմի Պապի, ողջունում են Նորին Սրբության խորհրդականներ **մոնսենյոր Մարտինին, Տրավիան** և **Վան Լիերդեն,** որոնք Նրան առաջնորդում են Սրբազան Պապի անձնական գրադարանի դահլիճը: Այստեղ **Հայոց Հայրապետին** միանում են Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց սրբազան պատրիարքները՝ **կարդինալներ Վիլլոյի** և **Վիլլեբրանտսի** հետ, ինչպես նաև հայ բարձրաստիճան հոգևորականները:

Հայրապետական շքախմբի աշխարհական պատվո անդամները սպասում էին փոքր գահասրահում:

Տ. Տ. Վազգեն կաթողիկոսի և **Ն. Սրբություն Պողոս Զ Պապի** առանձին տեսակցությունը տեղի է ունենում պապական առանձնասենյակում: Տեսակցությունը տևում է 40 րոպե: Այնուհետև **Ամենայն Հայոց Հայրապետը** և **Սրբազան Պապը** միասնաբար ուղղվում են դեպի Պապի անձնական գրադարանի ընդարձակ դահլիճը, որտեղ **Սրբազան Քահանայապետը** ողջագուրվում է Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց սրբազան պատրիարքների և հայրապետական շքախմբի մյուս հոգևորական անդամների հետ: **Հայոց Հայրապետն** էլ Իր հերթին ողջագուրվում է հանդիպմանը ներկա եղող կարդինալների և արքեպիսկոպոսների հետ: Ապա **Ամենայն Հայոց Հայրապետը** գրավոր մի ճառով ողջունում է **Սրբազան Պապին,** որին ի պատասխան **Սրբազան Քահանայապետը** կարդում է իր ողջույնի խոսքը:

Պաշտոնական այս ճառերից հետո երկու հոգևոր Պետերը խանդավառ ու հանդիսավոր մթնոլորտում փոխանակում են հուշանվերներ պատմական այս հանդիպման առիթով: Սրբազան Պապին նվերներ են մատուցում նաև Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց պատրիարքները: Բոլոր ներկաների միջև տեղի է ունենում եղբայրական ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Նվերների փոխանակումից հետո երկու հոգևոր Պետերը միասին մուտք են գործում պապական փոքր գահասրահը: Այստեղ **Սրբազան Քահանայապետը** սիրով և ջերմությամբ ողջունում է զանազան երկրներից եկած ծանոթ ազգայիններին, որոնք մեկ առ մեկ ներկայացվում են Իրեն, աջահամբույրով ստանում են **Սրբազան Պապի** օրհնությունը: **Սրբազան Քահանայապետը** առանձին-առանձին հետաքրքրվում է յուրաքանչյուրով և հայրաբար զրուցում նրանց հետ: Վերջում **Հայոց Հայրապետը** հրաժեշտ է առնում **Սրբազան Քահանայապետից** և պաշտոնական շքերթով առաջնորդվում Իր բնակավայրը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, **Ամենայն Հայոց Հայրապետը** երկու սրբազան պատրիարքների ընկերակցությամբ և շքախմբի անդամներով այցելում է **Պրիսչիլլայի** վանքը և գետնափոր դամբարանները, որտեղ **Հայոց Հայրապետին** ընդունում են սաղմոսերգությամբ և հանդիսավորապես վանքի մեծավորուհին և կրոնավորուհիների ողջ խումբը: Վանքի մատուռում տեղի է ունենում պատշաճ աղոթք և հանդիսություն:

Ավելի ուշ, ժամը 19-ին, նույն հանդիսավորությամբ **Վեհափառ Հայրապետը** այցելում է ս. Մարիամ Աստվածածին պատմական Մայր տաճարը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿԵՁՈՒՅԼ ԽԱՉ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆՎԵՐԸ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

ՄԵԾԱԴԻՐ ԵՌԱՓԵՂԿ ՍՐԲԱՆԿԱՐ. ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ՆՎԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Տաճարի շքամուտքի առաջ ավագերեց **կարդինալ Կառլո Կոնֆալոնիերին**, ի գլուխ իր հոգևորականների, եկեղեցական թափորով ընդունում է **Հայոց Հայրապետին** և առաջնորդում Նրան դեպի Մայր տաճար: Շքախմբի անդամները երգում են «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» շարականը:

Այնուհետև **Վեհափառ Հայրապետը** այցելում է **Դոն Ասպրենո Կոլոննա իշխանի** համբավավոր պալատը, որտեղ «Հռոմի շրջանակ» կոչված մտավորականների ընկերակցությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպում է շքեղ ընդունելություն, որին ներկա են լինում նաև Վատիկանի մոտ հավատարմագրված դիվանագիտական մարմնի ներկայացուցիչներ, դեսպաններ, իշխաններ, պաշտոնական այլ անձնավորություններ՝ շուրջ 100 հոգի: Սույն ընդունելությանը ներկա էին հայրապետական շքախմբի բոլոր հոգևորական և աշխարհական անդամները, վերջիններն՝ իրենց հարգելի տիկիններով:



Վենետիկ. Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի երգչախումբը

Պալատի շքամուտքի առաջ **Ամենայն Հայոց Հայրապետին** դիմավորում են իշխանը և իշխանուհին, պալատի ավանդական սովորության համաձայն, լուսավառ և գեղեցիկ կերոններով:

Ընդունելության ժամանակ, հանուն բոլոր ներկաների, **Ամենայն Հայոց Հայրապետին** ողջունում է Հռոմի բանկի նախագահ, իրավագետ **Վիտտորինո Վերոնեզը: Հայոց Հայրապետը,** Իր հերթին, հանդես է գալիս պատասխան

ճառով, որը թարգմանվում է ֆրանսերենի: Ընդունելության ավարտին օտար բոլոր պաշտոնական հյուրերը իրենց տիկիններով իշխանի և իշխանուհու կողմից ներկայացվում են **Հայոց Հայրապետին** և ծնրադիր, աջահամբույրով ստանում են Նրա օրհնությունները:

Նույն օրը, մայիսի 11-ի երեկոյան, ուշ ժամին, **Վեհափառ Հայրապետը** ընդունում է այցելությունը **կարդինալ Վիլլեբրանտսի:** Տեղի է ունենում ջերմ զրույց՝ երկու եկեղեցիներին հետաքրքրող մի շարք հարցերի շուրջ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ԱՌՆՈՒՄ ՀՌՈՄԻ ՊԱՊԻՑ

Մայիսի 12-ին, երեքշաբթի: Ամենայն Հայոց Հայրապետի Հռոմ այցելության վերջին օրն է:

Առավոտյան ժամը 9-ին **Հայոց Հայրապետը** Իր առանձնասենյակում ընդունում է հրաժեշտի այցելությունը **կարդինալ Աղաջանյանի:**

Ժամը 10-ին **Վեհափառ Հայրապետը,** ընկերակցությամբ **տ. Հայկազուն արքեպիսկոպոսի, տ. Նարեկ վարդապետի** և Իր անձնական քարտուղար **Պարգև Շահբազյանի,** ինչպես նաև իտալահայ վարչության նախագահ **Ստեփան Սրապյանի,** այցելում է Հռոմում Սովետական Միության դեսպան **Ն. Ս. Ռիժովին:** Ամենայն Հայոց Հայրապետի և պարոն դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Ժամը 12-ին **Սրբազան Քահանայապետը Ամենայն Հայոց Հայրապետին** ողջերթ մաղթելու համար անձամբ գալիս է Նրա բնակարանը՝ ընկերակցությամբ իր բարձրաստիճան խորհրդականների:

Այս առթիվ **Սրբազան Քահանայապետը Ամենայն Հայոց Հայրապետին** է նվիրում Հայաստանի առաքյալ և առաջին լուսավորիչ ս. Բարթողիմեոսի անյուն-մասունքը՝ զետեղված մեծադիր ճաճանչավոր մի խաչի մեջ:

Մասունքի հանձնման արարողությանը ներկա են հայոց երկու սրբազան պատրիարքները, հայրապետական շքախմբի անդամները և կարդինալներ ու արքեպիսկոպոսներ:

Երկու եկեղեցիների գերագույն Պետերը ստորագրում են այս առթիվ կազմված պաշտոնական համատեղ մի հայտարարություն, որը գրվել էր երկու օրինակով՝ **Սրբազան Պապի** և **Հայոց կաթողիկոսի** պաշտոնական թղթերի վրա:

Համատեղ հայտարարությունը պաշտոնապես ընթերցում է **կարդինալ Վիլլեբրանտսը:** Համատեղ հայտարարության ստորագրումը ավարտվում է լատիներեն և հայերեն լեզուներով արտասանված տերունական աղոթքով:

Սրբազան Քահանայապետը և **Ամենայն Հայոց Հայրապետը** իրենց շքախմբերով առաջնորդվում են ս. Հովհաննես աշտարակի փոքրիկ մատուռը, ուր տեղի է ունենում գոհաբանական մաղթանք և աղոթք Ամենայն Հայոց Հայրապետի Հռոմ պատմական այցելության առիթով: Արարողության ավարտին երկու Հայրապետները իջնում են աշտարակի գլխավոր շքամուտքի մոտ գտնվող դահլիճը, ուր փոխանակում են եղբայրության, խաղաղության և սիրո վերջին համբույրը ու հրաժեշտ առնում միմյանցից:

Հրաժեշտ են առնում միմյանցից նաև Հայոց Հայրապետի շքախմբի անդամներն ու Սրբազան Քահանայապետի խորհրդականները:

Մայիսի 12-ին, երեքշաբթի օրը, ժամը 12.40-ին, **Ամենայն Հայոց Հայրապետը** հանդիսավորապես առաջնորդվում է Հռոմի կենտրոնական երկաթու-

ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Déclaration commune

Paul VI, Évêque de Rome, Pape de l'Eglise catholique, et Vasken I, Catholicos-Patriarche Suprême de tous les arméniens, rendent grâces au Seigneur de leur avoir permis de prier ensemble, de se rencontrer, et d'échanger le saint baiser de paix, surtout en cette période de préparation à la grande fête célébrant la descente du Saint-Esprit sur les apôtres.

Conscients de leurs devoirs de pasteurs, ils invitent tous les chrétiens, et surtout ceux de l'Eglise catholique et de l'Eglise apostolique arménienne, à répondre avec encore plus de fidélité à l'appel du Saint-Esprit les incitant à une unité plus profonde qui accomplira la volonté de notre commun Sauveur, et qui rendra plus fécond le service du monde par les chrétiens.

Cette unité ne peut se réaliser que si tous, pasteurs et fidèles, cherchent à se connaître vraiment les uns les autres. A cette fin, ils exhortent les théologiens à s'adonner à une étude commune tendant à approfondir leur connaissance du mystère de notre Seigneur Jésus-Christ et de la révélation faite en Lui. Fidèles à la tradition transmise par les apôtres et les Pères, et, en même temps, conscients des exigences d'un monde qui cherche Dieu dans les nouveaux développements de notre époque, ils pour-

ront ouvrir de nouvelles voies qui permettront de surmonter les divergences existantes encore et amèneront leurs Eglises à une unité plus parfaite dans la profession de leur foi en face du monde. De leur part, le Pape et le Catholicos essayeront de faire tout le possible pour appuyer ces efforts et leur donner leur bénédiction de pasteurs.

Cependant la recherche risque elle-même de rester stérile si elle n'est pas enracinée dans toute la vie de toute l'Eglise. C'est pourquoi ils souhaitent que se développe une collaboration plus étroite dans tous les domaines possibles de la vie chrétienne. La prière commune, l'aide spirituelle réciproque, des efforts conjoints en vue de trouver aux problèmes du monde d'aujourd'hui des principes de solutions vraiment chrétiennes, seront des moyens précieux au service de cette recherche de la pleine unité tellement désirée.

Cette recherche accomplie ensemble, cette collaboration doivent être fondées sur la reconnaissance réciproque de la foi chrétienne et de la vie sacramentelle communes, sur le respect mutuel des personnes et de leurs Eglises. Si les efforts désintéressés que de tout coeur ils voudraient promouvoir, sont inspirés par cet esprit et sont mis en oeuvre de cette manière, ils ont confiance que l'Esprit de vérité et d'amour donnera aux membres de l'Eglise catholique et de l'Eglise apostolique arménienne cette fraternité véritablement chrétienne qui est le fruit de son action en eux.

C'est au nom de cette fraternité que le Pape Paul VI et le Catholicos Vasken I élèvent leur voix dans un appel solennel à tous ceux qui ont une influence sur la vie des nations et des peuples afin qu'ils s'efforcent de chercher et de trouver tous les moyens

possibles pour mettre fin aux guerres, à la haine, à la violence physique et morale, à n'importe quelle oppression de l'homme par l'homme. Que Celui qui est notre paix fasse que cet appel soit entendu.

Du Vatican, le 12 Mai 1970

Paulus PP. VI

Համատեղ հայտարարության բնագիրը

ղային կայարանը՝ մեկնելու համար **Վենետիկ՝** ս. Ղազար, սրտագին հրավերով աբբահոր և միաբանության անդամների:

Ամենայն Հայոց Հայրապետին, հանուն Սրբազան Պապի, ճանապարհում, են, **կարդինալ Վիլլեբրանտսի** գլխավորությամբ, կարդինալներ, արքեպիսկոպոսներ և պաշտոնական այլ անձնավորություններ:

Մայիսի 12-ին **Վեհափառ Հայրապետից** հրաժեշտ են առնում **տ. Եղիշե, տ. Շնորհք** սրբազան պատրիարքները և շքախմբի սրբազան արքեպիսկոպոսները:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԵՆԵՏԻԿԻ Ս. ՂԱԶԱՐ ՎԱՆՔՈՒՄ

Մայիսի 12-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 18.30-ին, **Վեհափառ Հայրապետը** գնացքով ժամանում է **Վենետիկ: Վենետիկի** քաղաքային կայարանում տեղի է ունենում սրտառուչ ընդունելություն, որին մասնակցում են Վենետիկի կաթոլիկ եկեղեցական և քաղաքային իշխանությանց ներկայացուցիչները: **Հայոց Հայրապետի** ժամանումը ողջունում են նաև աբբահայր **ն. Հմայակ վրդ. Կետիկյանը** և Մխիթարյան միաբանության անդամները, Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի տեսչության անդամները և ուսանողները:

Ժամը 19.30-ին **Հայոց Հայրապետը** շոգեմակույկներով առաջնորդվում է ս. Ղազար վանքը և հրաշափառով մուտք է գործում վանական եկեղեցին: Աբբահայր **Հմայակ վրդ. Կետիկյանը** արտասանում է բարիգալատյան հուզիչ մի ճառ, որին պատասխանելով **Հայոց Հայրապետը** հաղորդում է Իր ողջույնները և օրհնում բոլոր ներկաներին:

Հայոց Հայրապետը թանկագին հյուրն է ս. Ղազար վանքի:

Մայիսի 13-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի** նախագահությամբ, ս. Ղազար վանքում տեղի է ունենում հայր Ղևոնդ Ալիշանի սենյակ-թանգարանի հանդիսավոր բացումը՝ նրա ծննդյան 150-ամյակի կապակցությամբ:

Ժամը 11-ին **Վեհափառ Հայրապետի** նախագահությամբ կատարվում է ս. Ղազարի նորակերտ ձեռագրատան հանդիսավոր բացումը: Այս առթիվ

Վեհափառ Հայրապետը ս. Ղազարի վանքին է ձվիրում ս. Էջմիածնից բերված 13-րդ դարի մի խաչքար՝ արձանագրությամբ: Տեղի է ունենում գեղարվեստական ցերեկույթ, ուր ճառեր են փոխանակվում:

Ժամը 12-ին վանական սեղանատանը, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, տրվում է պաշտոնական ճաշկերույթ: Աբբահայր **Հմայակ վրդ. Կետիկյանը** որդիական երախտագիտություն է հայտնում իր ուղերձում **Հայոց Հայրապետի** այս բացառիկ և պատմական ուղևորության առթիվ ի ս. Ղազար՝ տոնական սույն հանդիսություններին նախագահելու համար:

Երեկոյան ժամը 16-ին **Վեհափառ Հայրապետը** ուղևորվում է Մեծ Մխիթարի գերեզմանը, ուր կատարվում է մասնավոր հոգեհանգիստ Մխիթար աբբայի և Մխիթարյան ուխտի հանգուցյալ միաբանների և բարերարների հիշատակին:

Մայիսի 14-ին, հինգշաբթի: Այսօր **Հայոց Հայրապետի** բարձր պատվին կատարված հանդիսությունները տեղի են ունենում **Վենետիկում:** Առավոտյան ժամը 10-ին **Վեհափառ Հայրապետը** այցելում է **Վենետիկի** ս. Մարկոսի տաճարը և ս. Խաչ եկեղեցին:

Ժամը 11-ին **Վեհափառ Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս Վենետիկի նահանգապետ **Նիկոզիային** և ապա քաղաքապետ **Ֆավարետտո Ֆիսկային** Կա Զուստինիան պալատում: **Հայոց Հայրապետի** և Վենետիկի նահանգապետի ու քաղաքապետի միջև տեղի է ունենում ջերմ զրույց և փոխանակվում են ճառեր:

Ժամը 18-ին **Վեհափառ Հայրապետը** այցելում է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, ուր նախագահում է Իր պատվին կազմակերպված ուսանողական հանդեսին:

Հայոց Հայրապետը հանդես է գալիս ուսանողությանն ուղղված կրոնաշունչ և հայրենասիրական ճառով և պատգամով: Հանդիսության ավարտին, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև **Վենետիկի** եկեղեցական և քաղաքային իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչները:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԱՐՁՅԱԼ ՄԻԼԱՆՈՅՈՒՄ

Մայիսի 15-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում ս. Ղազարից և գնացքով մեկնում **Միլանո՝** հովվապետական Իր այցելությամբ մխիթարելու և խանդավառելու այս առթիվ Իր հոգևոր զավակներին: **Միլանոյի** քաղաքային երկաթուղային կայարանում հանդիսավորապես դիմավորվելուց հետո, **Վեհափառ Հայրապետը** առաջնորդվում է «Էքսելսյոր Գալլիա» հյուրանոցը, ուր հետմիջօրեին ընդունում է բազում այցելություններ:

Մայիսի 16-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, **Վեհափառ Հայրապետը** մեծաթիվ Իր շքախմբով այցելում է ԺԵ դարում կառուցված **Միլանոյի** «Դուոմո Դի Միլանո» Մայր տաճարը, ուր **Հայոց Հայրապետին** դիմավորում են **կարդինալ Ջովաննի Կոլոմբոն** և տաճարի ավագերեց **Ջուզեպպե Սկիարիցի արքեպիսկոպոսը:** Տաճարում տեղի է ունենում աղոթք էկումենիկ ոգով: **Կարդինալ Ջովաննի Կոլոմբոն,** հանուն Միլանոյի եկեղեցական և քաղաքային իշխանության, ողջունում է **Հայոց Հայրապետի** ժամանումը: **Ամենայն Հայոց Հայրապետը** հանդես է գալիս ողջույնի և օրհնության պատասխան խոսքով, որը թարգմանվում է իտալերենի:

Ապա **Հայոց Հայրապետը** նույն հանդիսավորությամբ այցելում է ս. Ամբ-

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՔՑԱԼ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍԻ ՄԻ ՄԱՍՈՒՆՔԸ

ռոսյոսի Մայր տաճարը: Այստեղ ևս տեղի է ունենում աղոթք և փոխանակվում են ողջույնի և օրհնության խոսքեր:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, **Միլանոյի** «Հայ տուն» սրահում **Վեհափառ Հայրապետը** հանդիպում է ունենում միլանահայ համայնքի անդամների հետ: Ներկա էին ավելի քան 200 միլանահայեր: **Հայոց Հայրապետի** հետ պատվո սեղանի շուրջը տեղ էին գրավել պրն. պրն. **Երվանդ Հյուսիսյանը, Ստեփան Սրապյանը, Սարգիս Տիարպեքիրյանը և տիկին Մարթան (Բուենոս-Այրեսից), Տատուր Տատուրյանը (Նյու-Յորքից)** և ուրիշներ: Հավաքույթը բացում է **տ. Զգոն եպիսկոպոսը** բարիգալատյան ուղերձով: Ներկաներից շատերը ողջունում են **Հայոց Հայրապետի** շնորհաբեր ներկայությունը: Գործադրվում է գեղարվեստական հայտագիր: Վերջում **Վեհափառ Հայրապետը** հանդես է գալիս ողջույնի և օրհնության գեղեցիկ մի ճառով և, տալով Իր պատգամը, օրհնում է բոլոր ներկաներին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ

Մայիսի 17-ին, կիրակի: Հոգեգալուստ: Վեհափառ Հայրապետը Միլանոյի հայոց ս. Քառասուն մանկանց եկեղեցում մատուցում է հանդիսավոր ս. պատարագ և քարոզում Հոգեգալուստյան տոնի խորհրդի և հոգևոր նշանակության մասին: Հայրապետական ս. պատարագին ներկա են եկեղեցական և քաղաքային իշխանությանց բարձրաստիճան ներկայացուցիչներ, պաշտոնական հյուրեր, Միլանոյի ողջ հայ գաղութը և Եվրոպայի զանազան հայկական համայնքներից ժամանած բազմաթիվ հայեր: Հավարտ ս. պատարագի ներկաներից շատերը սուրբ ճաշակ են առնում **Հայոց Հայրապետի** ձեռքով:

Երեկոյան ժամը 20-ին **Միլանոյի** հայ համայնքը պաշտոնական ճաշկերույթով մեծարում է իր Հայրապետին «Էքսելսյոր» հյուրանոցի շքեղ դահլիճում: Հրավիրյալների թվում են Լոմբարդիայի և շրջակայքի քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներ և այլ պաշտոնական հրավիրյալներ: **Հայոց Հայրապետի** շնորհաբեր ժամանումը **Միլանո** ողջունում է փոխ-քաղաքապետ **կոմս Մելցի դ'Էրիլը:** Սույն ընդունելությանը ներկա են նաև Միլանոյի կարդինալի ներկայացուցիչ **Կոլոմբո արքեպիսկոպոսը** և Վատիկանի ներկայացուցիչ **հայր Լոնգը:** Ընդունելությունն անցնում է խանդավառ և հայրենասիրական մթնոլորտում: Վերջում հանդես է գալիս **Հայոց Հայրապետը** բոլոր ներկաներից պատգամ-ճառով և բոլոր ներկաներին բաշխում Իր հայրապետական օրհնությունները:

Մայիսի 18-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, **Վեհափառ Հայրապետը** հյուրանոցի Իր հարկաբաժնում տեսակցություն է շնորհում իտալական ամենատարածված թերթի՝ «Ավվենիրե»-ի թղթակցին: Օրվա մնացյալ ժամերին **Վեհափառ Հայրապետին** այցելում են ծանոթ ազգային դեմքեր, Միլանո ժամանած ներկայացուցիչներ՝ **Աթենքից, Վիեննայից, Ժնևից** և այլ տեղերից:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Միլանոյի **կարդինալ Ջովաննի Կոլոմբոն** իր արքեպիսկոպոսարանի պալատում հրաժեշտի ճաշկերույթ է տալիս ի պատիվ **Հայոց Հայրապետի** և Նրա շքախմբի անդամների: Ճաշկերույթի ժամանակ փոխանակվում են ողջերթի և օրհնության ճառեր: Փոխանակվում են նաև հուշանվերներ:

Վեհափառ Հայրապետը Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում ողջունում է հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոսին

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Մայիսի 19-ին, երեքշաբթի, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում **Միլանոյից:** Հետմիջօրեի ժամը 15-ին **Միլանոյի** միջազգային օդանավակայանում **Հայոց Հայրապետին** ճանապարհում են Միլանոյի եկեղեցական և քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներ, Միլանոյի ողջ հայ համայնքը և Միլանո ժամանած հայկական այլ համայնքների ներկայացուցիչներ, Մխիթարյան հայրեր և բազում այլ պաշտոնական անձնավորություններ:

Վեհափառ Հայրապետը «Air France» օդանավային ընկերության ինքնաթիռով մեկնում է **Փարիզ**՝ Իր շնորհաբեր այցելությամբ մխիթարելու Փարիզի ողջ հայությանը: Վեհափառ Հայրապետին ընկերակցում են **Հայկազուն, Սերովբե, Պսակ և Շահե սրբազաններն** ու շքախմբի մնայուն անդամները: **Փարիզի** Օռլիի օդանավակայանում **Վեհափառ Հայրապետը** պաշտոնապես դիմավորվում է **Փարիզի** հոգևոր, քաղաքային իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների, ինչպես նաև ազգային-եկեղեցական մարմինների և խուռներամ բազմության կողմից: **Վեհափառ Հայրապետին** դիմավորում են նաև **Կարապետ եպս. Ամատունին,** Եկեղեցական վարչության անդամներ

Ն. Ֆրենկյանը, Ս. Քարյանը, Ա. Օհանյանը, ինչպես նաև **Կ. Զրբաշյանը, պրոֆ. Ֆ. Ֆեյդին** և ուրիշներ:

Օդանավակայանում, պաշտոնական հյուրերի դահլիճում, **Վեհափառ Հայրապետը** պատասխանում է հայ և օտար թղթակիցների հարցերին: Ապա բազմաթիվ ավտոմեքենաների և առաջապահ պատվո ոստիկանների ուղեկցությամբ առաջնորդվում է Փարիզի հայոց ս. Հովհաննես եկեղեցին, ուր մուտք է գործում եկեղեցական թափորով և հրաշափառով: Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ **տ. Սերովբե արքեպիսկոպոսը** ողջունում է **Հայոց Հայրապետի** օրհնաբեր ժամանումը **Փարիզ** և բարի գալուստ է մաղթում: **Հայոց Հայրապետը** հաղորդում է Իր ողջույնները և բաշխում Իր օրհնությունները: Ապա **Վեհափառ Հայրապետը** առաջնորդվում է «Պլազա Աթենե» հյուրանոցը, ուր նրան հատկացվում է մասնավոր հարկաբաժին:

Վեհափառ Հայրապետը Մարսելում. Ողջույնի խոսք է ասում տ. Հակոբ եպս. Վարդանյանը

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ, ՄԵԾԱՀԱՐԳ ԺՈՐԺ ՊՈՄՊԻԴՈՒԻՆ

Մայիսի 20-ին, չորեքշաբթի օրը, հետմիջօրեի ժամը 16.30-ին, **Հայոց Հայրապետը** պաշտոնական այցելություն տվեց Ֆրանսիայի Հանրապետության մեծահարգ պրն. նախագահ **Ժորժ Պոմպիդուին** Էլիզեի պալատում:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին **տ. Սերովբե, տ. Հայկազուն արքեպիսկոպոսները, տ. Շահե եպիսկոպոսը, տ. Գյուտ, տ. Նարեկ վարդապետները,** փարիզահայ ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչներ **Ն. Ֆրենկյանը** և **Ս. Քարյանը:** Նախագահական Էլիզե պալատում **Հայոց Հայրապետը** առանձին առաջնորդվում է նախագահի ընդունելության դահլիճը, ուր տեղի է ունենում հանդիպում և զրույց **Ամենայն Հայոց Հայրապետի** և Հանրապետության պարոն նախագահի միջև, որը տևում է քսան րոպե:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 21-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, **Վեհափառ Հայրապետը Փարիզի** հայոց առաջնորդարանում ընդունում է այցելությունը պապական նվիրակ **մոնսենյոր Ռիգի Լամբերտինիի,** որին ընկերակցում էր իր փոխանորդ **մոնսենյոր Կոլլասոն:**

Վեհափառ Հայրապետը Ալֆորվիլում. Քաղաքապետի հետ դեպի Կոմիտասի անվան փողոցը ուղղվելիս

Ժամը 11-ին **Վեհափառ Հայրապետը** այցելում է **Փարիզի** Դպրոցասեր հայ տիկնանց և Սամվել-Մուրադյան վարժարանները, ուր օրհնելով ուսուցչական, հոգաբարձական, ծնողական մարմիններն ու ուսանողներին, տալիս է հայրենասիրական Իր պատգամը:

Երեկոյան ժամը 18-ին **Վեհափառ Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս Փարիզում Սովետական Միության դեսպան **Վալերիան Զորինին: Վեհափառ Հայրապետին** ընկերակցում էին **տ. Սերովբե արքեպիսկոպո-**

սը, տ. Գյուտ, տ. Նարեկ վարդապետները և պրն. Պարգև Շահբազյանը: Հայոց Հայրապետի և Սովետական Միության մեծահարգ պրն. դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Երեկոյան ժամը 20-ին տ. Եղիշե պատրիարքը Հայոց Հայրապետի պատվին ճաշկերույթ է տալիս Փարիզի շրջակայքի բացօթյա գեղատեսիլ մի ճաշարանում:

Մայիսի 22-ին, ուրբաթ օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրի առաջին տեղակալ պրն. Ժան Դը Լիպկովսկուն՝ ընկերակցությամբ տ. Սերովբե արքեպիսկոպոսի:

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Փարիզի հայոց առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը ֆրանսիական բանակի Աֆրիկյան դպրոցի տնօրեն գեներալ Ռոնդոյի: Ավելի ուշ Հայոց Հայրապետին է այցելում առաջնորդարանում Ռենի արքեպիսկոպոս և Ֆրանսիայի Եպիսկոպոսաց ժողովի Միարարական բաժնի նախագահ կարդինալ Պոլ Գույոնը:

Երեկոյան ժամը 20-ին Սերովբե արքեպիսկոպոսը և ֆրանսահայ ազգային-եկեղեցական մարմինները, ի պատիվ Հայոց Հայրապետի, բարիգալըստյան ընդունելություն են կազմակերպում «Պլազա Աթենե» հյուրանոցի ճաշասրահում՝ մասնակցությամբ հայ և օտար բարձրաստիճան հոգևոր պետերի և պաշտոնական անձնավորությունների: Հրավիրյալների թվում էին՝ Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանսուա Մարտին, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, Ֆրանսիայի պետական երեսփոխան Ալեն Գրիոտերեն, արտաքին գործոց նախարարության գաղթականաց գրասենյակի դեսպան և տնօրեն պրն. Ժորժ Պոնսը, Փարիզի քաղաքապետ Ռոժե Մոնեն, հույն օրթոդոքս եկեղեցու միտրոպոլիտ Մելետիոսը, Ֆրանսիայի բողոքական կոնֆեդերացիայի նախագահ Ժան Կուրվուազիեն, Մոսկվայի ռուսաց պատրիարքության ներկայացուցիչ Պիեռ Լուիլիեն, ներքին գործերի նախարարության կրոնից տեսուչ Օդիբերը: Ընդունելությանը ներկա էին նաև Եղիշե պատրիարքը, տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, տ. Շահե եպիսկոպոսը, կաթողիկե համայնքի պետ Կարապետ եպիսկոպոս Ամատունին, Հայ ավետարանական համայնքի հոգևոր պետ վեր. Գ. Սիսլյանը, ազգային ծանոթ դեմքեր, հայ և օտար մամուլի ներկայացուցիչներ և հյուրեր՝ Եվրոպայի մի շարք հայ համայնքներից: Ընդունելության ժամանակ, որն անցնում է ջերմ, քրիստոնեական եղբայրության և էկումենիկ ոգով, փոխանակվում են ուղերձներ և ճառեր:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼԻՈՆՈՒՄ

Մայիսի 23-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Սերովբե արքեպիսկոպոսի և Իր շքախմբի մնայուն անդամների, ժամանում է Լիոն, որտեղ դիմավորվում է հայամայնքի ազգային-եկեղեցական իշխանությունների կողմից՝ գլխավորությամբ Լիոնի հոգևոր հովիվ տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանի: Վեհափառ Հայրապետը հանդիսավոր շքերթով առաջնորդվում է Լիոնի ս. Հակոբ նորակերտ եկեղեցին, ուր մուտք է գործում հրաշափառով: Տ. Սերովբե արքեպիսկոպոսը և տ. Դավիթ վարդապետը ողջունում են Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությունը Իր հավատացյալ և հայրենասեր զավակների ծոցում: Իր պատասխան ողջույնի և օրհնության խոսքի մեջ Հայոց Հայրապետը Իր ուրախությունն է հայտնում երկրորդ անգամ Լիոնի հայ համայնքի մեջ գտնվելու համար:

Այնուհետև **Վեհափառ Հայրապետը** առաջնորդվում է «Սոֆիտել» հյուրանոցը, որի շքամուտքի ճակատին ֆրանսիական պետական դրոշի կողքին ծածանվում է նաև հայրապետական մետաքսահյուս արծիվ-դրոշակը:

Երեկոյան ժամը 21-ին Լիոնի ազգային-եկեղեցական մարմինները կազմակերպել էին համաժողովրդական հանդիպում ազգիս սիրելի Հայրապետի հետ «Սալ Ռամոյում», որին մասնակցում էին մոտ 1.000 լիոնահայեր, այդ թվում՝ **Նաբոլեոն Պոլուքյանը, Կարպիս Ճնկտրյանը, Գաբրիել Պահատուրյանը** և ուրիշներ: **Հայոց Հայրապետի** ժամանումը և ներկայությունը որդիական ակնածանքով և երախտագիտական զգացմունքներով ողջունում են **տ. Դավիթ ծ. վարդապետը** և Լիոնի եկեղեցական վարչության փոխ-նախագահ **պրն. Վարդան Եղիշեյանը:** Գործադրության է դրվում գեղարվեստական ճոխ հայտագիր: Վերջում Իր հայրենասիրական պատգամը տալով, բոլոր ներկաներին օրհնում է **Հայոց Հայրապետը:**

Ալֆորվիլ. Կոմիտասի անվան փողոցը

Մայիսի 24-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը Լիոնի հայոց ս. Հակոբ եկեղեցում մատուցում է հայրապետական հանդիսավոր պատարագ և Բանին կենաց ոգեշունչ քարոզով մխիթարում Իր զավակներին՝ բաշխելով ս. Էջմիածնի աստվածապարգև օրհնությունները և հաղորդելով ողջույնը հայոց վերածնված հայրենիքի:

Հայրապետական ս. պատարագին ներկա են Լիոնի **կարդինալ Ռընարի ներկայացուցիչ արքեպիսկոպոսը,** Վատիկանի Քրիստոնյաների միության քարտուղարության ներկայացուցիչը, ինչպես նաև պետական պաշտոնական

անձնավորություններ, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ և ողջ համայնքը Լիոնի հայոց, որոնցից շատերը **Վեհափառ Հայրապետի** ձեռքով ստանում են ս. հաղորդությունը:

Ժամը 14-ին, ի պատիվ **Հայոց Հայրապետի**, «Սոֆիտել» հյուրանոցի շքեղ դահլիճում տրվում է համայնքային մեծ ճաշկերույթ՝ մասնակցությամբ շուրջ 1.000 հոգու: Հրավիրյալների թվում էին **Լիոնի** եկեղեցական և քաղաքային իշխանությանց բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, հյուրանոցի Իր հարկաբաժնում, **Հայոց Հայրապետը** ընդունում է այցելությունը Լիոնի **կարդինալ Ռընարի** և **հայր Միշալոնի:**

Մայիսի 25-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, **Վեհափառ Հայրապետը** հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը Լիոնի հայ եկեղեցական վարչության անդամների: **Վեհափառ Հայրապետը** հանգամանորեն հետաքրքրվում է համայնքի եկեղեցական, կրթական և ազգային գործերով: Ժամը 11-ին **Վեհափառ Հայրապետը** ընդունում է այցելությունը **Դեսինի** եկեղեցական վարչության անդամների՝ գլխավորությամբ **Դեսինի** հայոց հոգևոր հովիվ **Վահան վարդապետ Թոփալյանի,** և հաճույքով լսում համայնքում կատարված եկեղեցական գործերի մասին՝ հայտնելով հայրապետական Իր գոհունակությունն ու օրհնությունը:

Հետմիջօրեի ժամը 15-ին **Վեհափառ Հայրապետը,** ընկերակցությամբ **տ. Սերովբե արքեպիսկոպոսի** և Իր շքախմբի անդամների, այցելում է **Լիոնի** «Սենտ Իրենե» էկումենիկ կենտրոնը, ուր տեսակցություն է ունենում արտագին մթնոլորտում կենտրոնի ղեկավարության հետ: **Հայոց Հայրապետի** պատվին այստեղ կատարվում է էկումենիկ աղոթք և արարողություն:

Ժամը 18-ին **Հայոց Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս **Լիոնի** քաղաքապետարան՝ քաղաքապետ **պրն. Պրադելին:** Հարգալիր դիմավորում, ողջույնի և բարիգալստյան ճառերի ու հուշանվերների փոխանակում: Հանդիպմանը ներկա էին քաղաքապետարանի խորհրդի անդամները և այլ պաշտոնական անձինք:

Ժամը 20-ին **Լիոնի** նահանգապետ **Մաքս Մուլենը** կազմակերպում է պաշտոնական ընդունելություն **Ամենայն Հայոց Հայրապետի** բարձր պատվին, որին ներկա են լինում **Լիոնի** նահանգի ընդհանուր գանձապահ **պրն. Լաբոնելին,** երեսփոխան **պրն. Շարեն,** Ֆրանսիայի Ազգային խորհրդի փոխ-նախագահ **պրն. Բոնժանը,** Պորտուգալիայի հյուպատոս **պրն. Դե Ալմեիդան,** հայտնի իրավագետ և Լիոնի նահանգի Ֆրանս—ՍՍՀՄ բարեկամության ընկերության նախագահ **պրն. Ամբրը** և այլ եկեղեցական ու պետական բարձրաստիճան անձնավորություններ:

Մայիսի 26-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամերին, **Լիոնի** հովվատան մեջ **Վեհափառ Հայրապետը** ընդունում է մի շարք այցելություններ, Կարմիր և Կապույտ խաչ տիկնանց միության անդամների, Լիոնի շրջանի Վիեն քաղաքի հայ ազգային միության ներկայացուցիչների:

Երեկոյան ժամը 20-ին **Հայոց Հայրապետի Լիոն** գտնվելու առիթով, ի պատիվ քաղաքի եկեղեցական և քաղաքային իշխանությունների ղեկավարության, «Պալե Դյու Կոնգրե»-ում **Հայոց Հայրապետի** անունով և հրավերով կազմակերպվում է պաշտոնական ընդունելություն, որին ներկա են՝ լինում նահանգապետն ու քաղաքագլուխը, Դեսինի քաղաքապետը, քույր եկեղեցիների հոգևոր պետեր, էկումենիկ կենտրոնի ներկայացուցիչներ, հյուպատոսներ, պառլամենտի անդամներ՝ թվով շուրջ 250 հոգի: Ընդունելության ժամա-

նակ, որն անցնում է ջերմ ու խանդավառ մթնոլորտում, ճառեր են փոխանակվում: Ընդունելության մի պահին, որպես անակնկալ, ունկնդրվեց ձայնագրյալ ճառը Լիոնի նախկին քաղաքագլուխ, Ֆրանսիայի պառլամենտի անդամ և հայ ժողովրդի բարեկամ **Էդուարդ Էրիոյի՝** խոսված 1954 թ.՝ ի դրվատումն հայ մշակույթի և հայ ժողովրդի մտավոր բարոյական բարեմասնությունների:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԵՍԻՆՈՒՄ ԵՎ ՎԱԼԱՆՍՈՒՄ

Մայիսի 27-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը ժամանում է **Դեսին,** որտեղ հայոց ս. Աստվածածին եկեղեցում հավաքված հավատացյալների բազմությունը ուրախությունն է ունենում լսելու **Հայոց Հայրապետի** ողջույնի խոսքն ու պատգամը և ստանալու Նրա սուրբ օրհնությունը:

Ժամը 12-ին **Վեհափառ Հայրապետը** այցելում է **Դեսինի** քաղաքագլուխ **պրն. Պիեռ Մուլենին,** որը քաղաքապետարանի «Սալ Դը Ֆետ» մեծ դահլիճում պաշտոնապես ողջունում է **Հայոց Հայրապետի** ներկայությունը **Դեսին՝** այն գնահատելով որպես բարիք և օրհնություն քաղաքին: **Հայոց Հայրապետի** և քաղաքագլխի միջև փոխանակվում են ճառեր և հուշանվերներ:

Մայիսի 28-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, ժամանելով Վալանս, Իր ներկայությամբ և պատգամով մխիթարում է համայնքի Իր հոգևոր զավակներին տեղի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ուր Նրան ողջունում է **տ. Նարեկ քահանա Վարդանյանը: Վալանսում Հայոց Հայրապետը** ուրախությունն է ունենում բացումը կատարելու «Դանիելյան» մեկօրյա հայ վարժարանի: Դպրոցի բացման հանդիսությանը ներկա է լինում նաև **Վալանսի** քաղաքագլուխ **Ժան Պերդրին,** որը, հանում քաղաքի ողջ ազգաբնակչության, բարի գալուստ է մաղթում **Հայոց Հայրապետին:**

Վալանսում Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս նահանգապետին և քաղաքագլխին:

Մայիսի 28-ին, ժամը 17-ին, տեղի է ունենում համայնքային մեծ հանդիպում, ի պատիվ Հայոց Հայրապետի Հ. Բ. Ը. Մ.-ի «Երվանդ Հյուսիսյան» սրահում:

Երեկոյան ժամը 20-ին **Վալանսի** ողջ հայությունը «Կրուա Դոր» հյուրանոցի ընդարձակ դահլիճում կազմակերպում է համագաղութային մեծ ճաշկերույթ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՐՍԵԼՈՒՄ

Մայիսի 29-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը ժամանում է **Մարսել: Մարսելի** ողջ հայությունը, ազգային-եկեղեցական մարմինները օդանավակայան էին փութացել՝ ողջունելու ազգիս սիրելի Հայրապետի օրհնաբեր ժամանումը՝ գլխավորությամբ Մարսելում հայրապետական պատվիրակի փոխանորդ **տ. Հակոբ եպս. Վարդանյանի** և Մարսելի կաթոլիկ **արքեպիսկոպոս Ժորժ Ժակոյի: Վեհափառ Հայրապետը** պատվո ուտիկանների և բազմաճարյուր ինքնաշարժերի շքերթով առաջնորդվում է **Մարսելի** հայոց Պրադոյի Մայր եկեղեցին: **Հակոբ եպս. Վարդանյանը,** հանում **Մարսելի** հայ համայնքի, սրտառուչ ուղերձով ողջունում է **Հայոց Հայրապետի** ժամանումը **Մարսել: Վեհափառ Հայրապետը** ողջույնի խոսքով օրհնում է հավատացյալ ժողովրդին:

ԼԻՍԱԲՈՆ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏ. ՊԵՐՏԻԳԱՆԸ, ԳԱԼՈՒՍՏ ԿՑՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Աստվածամայր. Մոնսենյոր Ժան Ոյուպպ եպիսկոպոսի նվերը

Երեկոյան ժամը 20-ին հյուրանոցի Իր հարկաբաժնում **Վեհափառ Հայրապետը** ընդունում է այցելությունը Մարսելի եկեղեցական վարչության պատվարժան անդամների, գլխավորությամբ ատենապետ **Արծրուն Զրբաշյանի** և փոխ-ատենապետ **դոկտ. Ղազինեճյանի,** և զրուցում նրանց հետ՝ **Մարսելի** թեմի ազգային-եկեղեցական հարցերի շուրջ:

Մայիսի 30-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, **Վեհափառ Հայ-**

րապետը Իր հարկաբաժնում ընդունում է պաշտոնական այցելությունը առաջին մինիստրի առընթեր պետական քարտուղար **Ժոզեֆ Կոմիտիի** ու նրա փոխանորդ-քարտուղար **Բրյունի**, ինչպես նաև **Բուշ Դյու Ռոնի** երեսփոխան **Պիեռ Լուկասի: Հայոց Հայրապետի** և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Նույն օրը, ժամը 12-ին, **Հայոց Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս **Մարսելի** քաղաքագլուխ, հայտնի պետական գործիչ **Գաստոն Դեֆերին:** Քաղաքապետարանի մուտքի առաջ **Վեհափառ Հայրապետը** ընդունվում է մեծարանքով և առաջնորդվում քաղաքապետարանի ընդունելությանց մեծ դահլիճը, որտեղ Նրան ջերմորեն ողջունում է պարոն քաղաքագլուխը: **Հայոց Հայրապետը** Իր պատասխան ողջույնի և շնորհակալության խոսքի մեջ օրհնում է Ֆրանսիայի հյուրընկալ հողը և նրա ազնիվ ժողովրդին ու, ի դեմս **Մարսելի** մեծահարգ պարոն քաղաքագլխի, **Ֆրանսիայի** մեծ ղեկավարներին իրենց հետագա հայրենանվեր գործունեության մեջ բարեմաղթում հաջողություններ:

Այս հանդիսավոր առիթով պարոն քաղաքագլուխը հանդիսավորապես **Հայոց Հայրապետին** է հանձնում Մայր Աթոռի միաբան և հայերեն առաջին Աստվածաշնչի տպագրության մեծ երախտավոր Ոսկան վարդապետ Երևանցու ժամանակաշրջանի և Ամստերդամի հայ եկեղեցու վերաբերյալ մի քարե տախտակ-հիշատակարան՝ հայերեն արձանագրությամբ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ

Մայիսի 31-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, **Վեհափառ Հայրապետը Մարսելի** հայոց Պրադոյի Մայր եկեղեցում մատուցում է հանդիսավոր ս. պատարագ և քարոզում, որին ներկա են լինում բազմաթիվ հրավարյալներ՝ **Մարսելի** եկեղեցական և քաղաքային իշխանությանց բարձրաստիճան ներկայացուցիչներ, քույր եկեղեցիների հոգևոր պետեր, հայ կաթողիկե և հայ ավետարանական համայնքների ղեկավար անդամներ, **Մարսելի** եկեղեցական վարչության, թաղական խորհուրդների անդամներ և հավատացյալ հոծ բազմություն: Հայրապետական ս. պատարագը ձայնասփռվում է Մարսելի ռադիո-հեռուստատեսության կողմից:

Հավարտ ս. պատարագի, **Վեհափառ Հայրապետի** հանդիսադրությամբ և օրհնությամբ, Մայր եկեղեցու բակում կատարվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հանուն **Ֆրանսիայի** ազատագրման զոհված հայ մարտիկների և դիմադրական շարժման մասնակիցների հիշատակին նվիրված կոթողի հիմնարկեքի արարողությունը՝ ի ներկայության պաշտոնական-պետական-եկեղեցական անձնավորությունների:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեկոյան ժամը 18-ին **Վեհափառ Հայրապետը** հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը **Մարսելի** հայ երիտասարդաց կազմակերպության (ԺԱՖ) պատվիրակության:

Ժամը 21-ին **Վեհափառ Հայրապետի** պատվին Հ. Բ. Ը. Միության Մարսելի մասնաճյուղը իր «Ալեք Մանուկյան» սրահում կազմակերպում է հանդիպում-ընդունելություն: Արտասանվում են բարիգալստյան և ողջույնի խոսքեր:

Հունիսի 1-ին, երկուշաբթի օրը, ժամը 12-ին, **Վեհափառ Հայրապետը** հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը **Մարսելի** Սեն Ժերոմի ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցու թաղական խորհրդի անդամների:

Ժամը 16-ին հյուրանոցի Իր հարկաբաժնում **Վեհափառ Հայրապետին** այցելում է Մարսելի **արքեպիսկոպոս Ժորժ Ժակոն:** Տեղի է ունենում ջերմ զրույց երկու հոգևոր պետերի միջև:

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, **Ամենայն Հայոց Հայրապետը** պաշտոնական այցով լինում է **Մարսելի** Սեն Մաժոր Մայր եկեղեցին, ուր դիմավորվում է **Ժակո արքեպիսկոպոսի** կողմից: Այս մեծ տաճարի գետնահարկում է գտնվում Ոսկան վարդապետ Երևանցու նոր հայտնաբերված շիրիմը: **Հայոց Հայրապետը** իջնում է տաճարի գետնահարկը և «Հոգվոց» է արտասանում հայ տպագրության արվեստի մեծ երախտավորի նվիրական հիշատակին:

Այնուհետև **Հայոց Հայրապետը Ժակո արքեպիսկոպոսի** հրավերով այցելում է Սեն Վիկտոր բազիլիկան, ուր տեղի է ունենում էկումենիկ աղոթք-արարողություն՝ մասնավոր ծրագրով:

Երեկոյան ժամը 20-ին **Ժորժ Ժակո արքեպիսկոպոսը** արքեպիսկոպոսարանի դահլիճում **Հայոց Հայրապետի** պատվին կազմակերպում է ընդունելություն:

Հունիսի 2-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, **Ամենայն Հայոց Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս **Բուշ Դյու Ռոնի** նահանգապետ **Ժան Լապորտին:** Նահանգապետի և **Հայոց Հայրապետի** միջև փոխանակվում են ճառեր և հուշանվերներ:

Ժամը 11-ին **Վեհափառ Հայրապետը** հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը ֆրանսահայ «Կապույտ խաչ» ընկերության Մարսելի տիկնանց մասնաճյուղի անդամուհիների:

Ժամը 12-ին **Վեհափառ Հայրապետին** են այցելում ֆրանսահայ մշակութային միության Մարսելի մասնաճյուղի վարչության ղեկավար անդամները:

Երեկոյան ժամը 19-ին **Սենտ Անտուանի** ս. Թադեոս եկեղեցու թաղական խորհրդի և Եկեղեցասեր տիկնանց միության վարչության անդամները, **Վեհափառ Հայրապետին** ներկայանալով, զեկուցում են իրենց թաղի եկեղեցական-համայնքային գործերի մասին:

Գիշերվա ժամը 21-ին **Մարսելի** ողջ հայությունը, ազգային-եկեղեցական իշխանությունները կազմակերպում են ժողովրդական հանդիպում, որտեղ **Վեհափառ Հայրապետը** հանդես է գալիս Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր, մշակութային, շինարարական գործունեության մասին բովանդակալից մի բանախոսությամբ՝ վեր առնելով նաև մայր հայրենիքում կատարված մեծ նվաճումները:

Հունիսի 3-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, հյուրանոցի Իր հարկաբաժնում **Վեհափառ Հայրապետին** են այցելում մարսելահայ ազգայիններ **Հակոբ Պապիկյանը, Վարդան Պանտիկյանը, Ճանիկյանը** և **Ավետիս Մելքոնյանը:**

Երեկոյան **Վեհափառ Հայրապետը** ընդունում է այցելությունը ֆրանսահայ նախկին մարտիկների և դիմադրության ճակատի միության վարչության անդամների, ապա Մարսելի մարզական հայ երիտասարդական միության և, ավելի ուշ, Մարսելի շրջանի Կամպանի Ֆրեզի ս. Կարապետ եկեղեցու թաղական խորհրդի անդամների:

Նույն օրը, գիշերվա ժամը 21-ին, ողջ մարսելահայ համայնքը, եկեղեցա-

կան-ազգային վարչությունները, թաղական խորհուրդները և հայկական այլ կազմակերպություններ ողջերթի ճաշկերույթով իրենց որդիական սերն ու հավատարմությունը մի անգամ ևս արտահայտում են դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը և նրա ազգընտիր Հայրապետը: Հանուն Մարսելի քույր եկեղեցիների և հարևանվանությանց **Ամենայն Հայոց Հայրապետին** բարի ճանապարհ են մաղթում Մարսելի արքեպիսկոպոսի փոխանորդ **հայր Սենտյուրիեն**, Լիբանանի մարոնիտ եկեղեցու ներկայացուցիչ **մոնսենյոր Հայեքը**, հայ կաթողիկե համայնքի պետ **Հարություն վրդ. Չուհաճյանը**, Ֆրանսիայի ավետարանական եկեղեցու ներկայացուցիչ **վեր. Շարպիոն** և ուրիշներ:

Հանդիսության առիթով **Վեհափառ Հայրապետը** Իր բարձր ուշադրությանը արժանացնելով **Արծրուն Ջրբաշյանի** եկեղեցականներ, հանրօգուտ ծառայությունները՝ նրա կուրծքը զարդարում է ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՆԱԿՈՅՈՒՄ ԵՎ ՆԻՑՑԱՅՈՒՄ

Հունիսի 4-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, հրաժեշտ առնելով Մարսելից, քաղաքային ճեպընթացով եռօրյա այցելության համար մեկնում է **Մոնակո** և **Նիցցա**՝ եղբայրական հրավերով Մոնակոյի **Ժան Ռյուպպ** եպիսկոպոսի: **Վեհափառ Հայրապետը Մոնակոյում** եղած օրերին ջերմորեն վայելում է հյուրասիրությունը **տեր և տիկին Մուշեղ Ճիերճյանների:**

Հունիսի 5-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը այցելում է **Մոնակոյի** իշխանական պալատը և նրա կից մատուռը, ապա՝ վարչապետարան:

Երեկոյան ժամը 18.30-ին **Մոնակոյի** Մայր տաճարում տեղի է ունենում էկումենիկ աղոթք և արարողություն, որին ներկա է լինում **Վեհափառ Հայրապետը:**

Հունիսի 6-ին, շաբաթ օրը, ժամը 13-ին, **Ժան Ռյուպպ** եպիսկոպոսը իր եպիսկոպոսարանում **Ամենայն Հայոց Հայրապետի** պատվին կազմակերպում է ընդունելություն, որին ներկա են լինում հայ և օտար պաշտոնական անձնավորություններ: Ամենայն Հայոց Հայրապետը և հյուրընկալ եպիսկոպոսը ճառեր և հուշանվերներ են փոխանակում:

Հունիսի 7-ին, կիրակի օրը, Նիցցայի հայ համայնքի եկեղեցական վարչության հրավերով և առաջնորդությամբ **Վեհափառ Հայրապետը** մեկնում է **Նիցցա**՝ ներկա լինելու և՛ ս. պատարագին, և՛ օրհնելու Իր հոգևոր զավակներին: **Նիցցայի** հայոց եկեղեցում պատարագ է մատուցում **տ. Հակոբ** եպիսկոպոս **Վարդանյանը,** քարոզում՝ **Վեհափառ Հայրապետը:**

Նույն օրը, ժամը 14-ին, **Նիցցայի** հայ համայնքը, ի պատիվ **Հայոց Հայրապետի,** «Նեգրեսկո» հյուրանոցի ճաշասրահում կազմակերպում է ողջերթի ընդունելություն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼԻՍԱԲՈՆՈՒՄ

Հունիսի 8—11-ը Ամենայն Հայոց Հայրապետը Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ **դոկտ. Ազերեդո Պերտիգանի** մասնավոր հրավերով եղավ Լիսաբոնում, որպես հաստատության թանկագին հյուր: Հայոց Հայրապետին ընկերակցում էին՝ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Նարեկ վրդ. Շաքարյանը** և **Պարգև Շահբազյանը:**

Հունիսի 8-ին, երկուշաբթի օրը, ժամը 16-ին, **Վեհափառ Հայրապետը** ժամանում է Լիսաբոնի օդանավակայանը, ուր դիմավորվում է Գալուստ Կյուլպենկյան հաստատության ղեկավար անձնակազմի կողմից՝ գլխավորությամբ



Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՅՈՒՂԱՆԵՐԿ ՆԿԱՐԸ. ՆՎԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ



Լիսաբոն. Գարուստ Կյուլբենկյան հիմնարկությունը պատատում Վենետիկ Հայրապետին ողջունում է Ճախագահ դոկտ. Պերսիգանը



Բուիրա վանքի ուխտագրաց Ամենայն Հայոց կաթողիկոսը, «ոսկեմեծաստանի»

նախագահ դոկտ. **Ա. Պերտիգանի: Հայոց Հայրապետի** ժամանումը, հանուն **Լիսաբոնի** քաղաքային իշխանության, ողջունում է արտաքին գործոց նախարարության ներկայացուցիչը:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Ռից» հյուրանոցը: Գիշերվա ժամը 21-ին **Վեհափառ Հայրապետը** ներկա է լինում «Կոլիզե» երաժշտական մեծ դահլիճում Կյուլպենկյան հաստատության կողմից կազմակերպված համերգին:

Հունիսի 9-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, **Վեհափառ Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս Գալուստ Կյուլպենկյան հաստատության նորակառույց կենտրոնին, ուր ջերմորեն դիմավորվում է և առաջնորդվում դեպի հաստատության պատվո դահլիճը: Այստեղ նախագահ **Ա. Պերտիգանը,** ի ներկայության հիմնարկության ողջ ղեկավար անձնակազմի, բարի գալուստ է մաղթում **Ամենայն Հայոց Հայրապետին: Վեհափառ Հայրապետը** Իր պատասխան ողջույնի խոսքի մեջ ոգեկոչում է հիշատակը մեծ բարերար և Մայր Աթոռ ս. Էջմիածնի հարազատ զավակ Գալուստ Կյուլպենկյանի և հետագա հաջողություններ է մաղթում Հաստատության մարդասիրական, մշակութային գործունեությանը: Այնուհետև **Վեհափառ Հայրապետը** այցելում է նորակառույց կենտրոնի բոլոր բաժինները և ապա «Գալուստ Կյուլպենկյան» թանգարանը և գրադարանը:

Հետմիջօրեի ժամը 15.30-ին **Ամենայն Հայոց Հայրապետը** պաշտոնական այցելություն է տալիս, ընկերակցությամբ Իր շքախմբի անդամների և մեծարգո **դոկտ. Պերտիգանի, Պորտուգալիայի** հանրապետության նախագահ **Ամերիկո Թոմասին,** ապա արտաքին գործոց նախարար **դոկտ. Ռուի Պատրիսիոյին** և վերջում՝ վարչապետ **Մարսելլո Կայետանոյին: Հայոց Հայրապետի** և Պորտուգալիայի պետական բարձրաստիճան ղեկավարների միջև տեղի է ունենում հարգալիր զրույց:

Երեկոյան ժամը 21-ին Գալուստ Կյուլպենկյան հաստատության նախագահությունը և ղեկավարությունը **Ամենայն Հայոց Հայրապետի** պատվին կազմակերպում են պաշտոնական ընդունելություն «Կաստելլո Դը Սան Ժորժ»-ում, որին ներկա են լինում Պորտուգալիայի արտաքին գործոց նախարար **դոկտ. Պատրիսիոն** իր հարգելի տիկնոջ հետ, պապական նվիրակ **մոնսենյոր Ջուզեպպե Մարիա Սենսին,** Լիսաբոնի կարդինալ-պատրիարքի ներկայացուցիչ **Կանոնիկոս դոկտ. Ժոան Դը Կաստրոն,** հայրապետական շքախմբի անդամները, Հաստատության նախագահը և բաժինների տնօրենները իրենց հարգելի տիկիններով, ինչպես նաև Հիմնարկության հայկական բաժնի աշխատակիցները: Ընդունելությունն անցնում է ջերմ մթնոլորտում: **Հայոց Հայրապետը** և արտաքին գործոց նախարարը ճառեր են փոխանակում:

Հունիսի 19-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, **Վեհափառ Հայրապետը** Իր շքախմբով այցելում է **Լիսաբոնից** 250 կմ հեռավորության վրա գտնվող Ֆաթիմայի ուխտավայրը, ուր դիմավորվում է Պորտուգալիայի **կարդինալ-պատրիարք Էմմանուել Գոնսալես Սերեժեյրայի,** և Պորտուգալիայի շուրջ 20 թեմական եպիսկոպոսների կողմից: **Հայոց Հայրապետը** եկեղեցական թափորով առաջնորդվում է Սրբուհու մատուռ-վկայարանը, ուր Իր աղոթքն անելուց հետո այցելում է Մայր եկեղեցին:

Հունիսի 11-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը առավոտյան ժամը 10-ին այցելում է հիվանդանոցում **տեր և տիկին Ռոբերտ Կյուլպենկյաններին,** որոնք հունիսի 6-ին, շաբաթ օրը, ենթարկվել էին ավտոմոբիլա-

Վեհարանում Հայրապետը և Պարտուցգրիի արքեպիսկոպոսը ներկայանում են Ճարտիկցոյում



ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ. ԲԱԹԱԼԻԱՅԻ ՎԱՆՔԸ (ԺԴ ԴԱՐ)

յին լուրջ վթարի: **Հայոց Հայրապետը** օրհնում է **տեր և տիկին Ռոբերտ Կյուլպենկյաններին** և նրանց բարեմաղթում շուտափույթ ապաքինում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԱՐՁՅԱԼ ՓԱՐԻԶՈՒՄ

Հունիսի 11-ին, ժամը 12-ին, **Վեհափառ Հայրապետը** հրաժեշտ է առնում **Լիսաբոնից** և վերադառնում դարձյալ **Փարիզ,** ուր իջևանում է «Պլազա Աթենե» հյուրանոցում:

Հունիսի 12-ին, ուրբաթ օրը, ժամը 12-ին, **Վեհափառ Հայրապետին** են այցելում ս. Ղազարի ասպետները:

ՈՂՋԵՐԹԻ ՄԵԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 12-ին, գիշերվա ժամը 21-ին, **Փարիզի** առաջնորդարանը և եկեղեցական վարչությունն ու ազգային բոլոր կազմակերպությունները Հիլտոն հյուրանոցի շքեղ դահլիճում կազմակերպում են, ի պատիվ **Հայոց Հայրապետի,** ողջերթի փառաշուք ընդունելություն՝ մասնակցությամբ 600 հրավիրյալների: Ընդունելությանը ներկա էին նաև հայ կաթողիկե և հայ ավետարանական համայնքների հոգևոր պետերը:

Հունիսի 13-ին, շաբաթը օրը, ժամը 14-ին, **Փարիզի** «Շալե Դե զիլ» արվարձանում Փարիզի եկեղեցական վարչության անդամների ներկայությամբ **Վեհափառ Հայրապետը** ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանով պարգևատրում է **Նուրհան Ֆրենկյանին** և **Գևորգ Պագրճյանին**՝ նրանց եկեղեցանվեր երկարամյա ծառայության համար:

Ժամը 15-ին հյուրանոցի Իր հարկաբաժնում **Վեհափառ Հայրապետին** է այցելում **Քյոլնի** հայ ուսանողական միության պատվիրակությունը՝ **Գարեգին աբեղա Պենկյանի** գլխավորությամբ:

Նույն օրը, ժամը 16-ին, **Վեհափառ Հայրապետը** այցելում է **Ալֆորվիլ** քաղաքի քաղաքապետարանը, ապա նախագահում տեղի սպորտային մեծ պալատում Իր պատվին կազմակերպված համահայկական մեծ հանդիսությանը: Ալֆորվիլի քաղաքապետ **Ժոզեֆ Ֆրանչեսկին** ողջունում է **Հայոց Հայրապետի** ներկայությունը, որն իր պատասխան ճառում օրհնում է բոլոր ներկաներին՝ հայտնելով հայրապետական Իր բարձր գնահատությունը հանդիսության կազմակերպիչներին և ներկա գտնվող հայ ժողովրդի զավակներին: Այնուհետև **Հայոց Հայրապետը,** ընկերակցությամբ քաղաքապետի, համաժողովրդական մեծ թափորով, հետիոտն առաջնորդվում է այն փողոցը, որը քաղաքապետարանի որոշումով կրելու է անմահ Կոմիտաս վարդապետի սուրբ անունը: Խանդավառ մթնոլորտում **Վեհափառ Հայրապետը** կտրում է ժապավենը, իջեցնում է փողոցի ցուցանակը ծածկող ֆրանսիական պետական դրոշակը, և բոլորի հուզումնախառն աչքերի առջև պարզվում է փողոցի նոր անունը՝ «Ռյու Կոմիտաս»: Այնուհետև կոմիտասյան նոր փողոցով **Վեհափառ Հայրապետը** առաջնորդվում է դեպի **Ալֆորվիլի** հայոց ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, ուր նախագահում է կիրակամտի ժամերգությանը:

Երեկոյան ժամը 19-ին **Վեհափառ Հայրապետը Փարիզի** արքեպիսկոպոսի հրավերով առաջնորդվում է Փարիզի հռչակավոր Աստվածամոր տաճարը, ուր տեղի է ունենում էկումենիկ աղոթք և արարողություն հատուկ ծրագրով, որին ներկա են լինում հայ և ֆրանսիացի բազմահազար հավատացյալներ: Փարիզի արքեպիսկոպոս **կարդինալ Մարտին** ողջունում է **Հայոց Հայրապե-**

տի ներկայությունը ս. Աստվածամոր տաճարի պատմական կամարների տակ: **Հայոց Հայրապետը** ընթերցում է Իր ողջույնի և օրհնության խոսքը ֆրանսերեն լեզվով: Ապա երկու հոգևոր պետերը սուրբ սեղանի առաջ ողջագուրվում են ի համբույր սրբության:

Ավելի ուշ Փարիզի արքեպիսկոպոս **կարդինալ Մարտին Հայոց Հայրապետի** պատվին ընդունելություն է կազմակերպում իր արքեպիսկոպոսարանի պալատում:

Հայրապետական այցելության առթիվ արտասահմանյան մամուլի արձագանքներ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ

Հունիսի 14-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, **Վեհափառ Հայրապետը Փարիզի** հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում մատուցում է հանդիսավոր պատարագ և Բանին կենաց քարոզությամբ վերջին անգամ միսիթարում և ոգեշնչում Իր հավատացյալ զավակներին:

Երեկոյան ժամը 18-ին **Վեհափառ Հայրապետին** են այցելում Գևորգյան ճեմարանի մի խումբ նախկին սաներ՝ բոլորն էլ ծերունազարդ հասակում:

Ժամը 21-ին **Վեհափառ Հայրապետի** բարձր նախագահության ներքո **Փարիզի** «Սալ Գավոյի» շքեղ հանդիսասրահում տեղի է ունենում հոբելյանական հանդիսություն սփյուռքահայ հայտնի մտավորական և «Էջմիածին» ամսագրի մնայուն աշխատակից **Հ. Ճ. Սիրունու** ծննդյան 80-ամյակի և գրական գործունեության 65-ամյակի առթիվ:

Հունիսի 15-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը և՛ հյուրանոցում, և՛ առաջնորդարանում ընդունում է բազում այցելություններ:

Երեկոյան ժամը 21-ին **Փարիզի** «Սալ Դը Շիմիում» տեղի է ունենում Մայր Աթոռում 1969 թվականի աշնանը եպիսկոպոսական ժողովի գումարման, սրբալույս մյուռոնի օրհնության և **Վեհափառ Հայրապետի** ծննդյան 60-ամյակի հանդիսություններին նվիրված «Էջմիածին» գունավոր կինոնկարի ցուցադրությունը, որը պատրաստվել էր Երևանի կինոստուդիայում Մայր Աթոռի պատվերով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հունիսի 17-ին **Վեհափառ Հայրապետը** հրաժեշտ է առնում **Փարիզից** և ամսի 20-ին, շաբաթ օրը, Մոսկվա—Երևան երթուղիով ժամանում Մայր Աթոռ՝ շուրջ մեկ ու կես ամսվա հովվապետական այցելությունից հետո:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունում են Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, վանքի պաշտոնեությունը և այլ անձնավորություններ՝ գլխավորությամբ լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին բարի գալուստ է մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Հունիսի 21-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագի ընթացքում Իր քարոզի մեջ **Վեհափառ Հայրապետը** խոսում է Իր վերջին ուղևորության հոգևոր, եկեղեցական, հայրենասիրական նշանակության մասին՝ մայր հայրենիքի հայությանը հաղորդելով Իր այցելած երկրների եկեղեցական հայ համայնքների ողջույնն ու բարեմաղթությունները: